## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

28հոկտեմբերի 2015 թվականի N 137- Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2015թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2015թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31 ԱՆՑԿԱՑՎՈՂ «ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ» ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերով և համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 20.03.2012թ. N 194-Ն,ՀՀ պաշտպանության նախարարի 11.04.2012թ.N 323,ՀՀ արտակարգ իրավիճակների 26.03.202թ.N32-Ն,ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 21.03.2012թ. N1-Ն ՀՀ ոստիկանապետի 24.03.2012թ N5-Ն և ՀՀ անվտանգության ծառայության տնօրենի 04.04.2012թ. N1-Ն համատեղ հրամաններով հաստատված կարգի որոշում եմ.

1.2015թ. հոկտեմբերի 28-ից մինչև հոկտեմբերի 31-ը մարզի հանրակրթական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ացկացնել «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի մարզային փուլը:

2.Հաստատել մարզային մրցութային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

3.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. հոկտեմբերի28
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի 2015
թվականի հոկտեմբերի 28-ի
N 137- Ա որոշման

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

## <<ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ>> ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| 1.Ալեքսանյան Հովիկ | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագ./ |
| 2. Այվազյան Վովա | ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ |
| 3.Դադոյան Սմբատ | Կապանի զինկոմիսարիատի զորակոչի բաժնի պետ /համաձայնությամբ/ |
| 4.Սահակյան Սուրեն | ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ /համաձայնությամբ/ |
| 5.Քարամյան Հայկ | ՀՀ ազգային անվտանգության ծառայության Սյունիքի մարզային վարչության աշխատակից /համաձայնությամբ/ |
| 6.Գրիգորյան Գոռ | Կապանում տեղակայված N զորամասի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ /համաձայնությամբ/ |
| 7.Բալյան Վրույր | ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/ |

Աշխատակազմի ղեկավար՝ Ռ. Ղազարյան